

Հարց

Ինչպե՞ս է հաշվարկվում էլեկտրական էներգիա արտադրող կայանների հասույթը:

Պատասխան

Անհրաժեշտ հասույթը (ԱՀ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՀ = ԹԾ + Մ + ԹՇ$$

որտեղ՝

ԹԾ – թույլատրելի տարեկան ծախսերն են՝

- շահագործման և պահպանման ծախսերը,
- հարկերը (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից) և Արցախի Հանրապետության օրենքներով սահմանված տուրքերն ու պարտադիր այլ վճարները,
- Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսեր:

Մ – հիմնական միջոցների տարեկան մաշվածությունն է,

ԹՇ – թույլատրելի շահույթն է: